



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ՝

ՀԱԱՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

ՌԵԿՏՈՐ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Թ. 1

« \_\_\_\_\_ »

«28» սեպտեմբերի 2023 թ.



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝

071804.00.7 Ագրարային ճարտարագիտություն

Կրթական ծրագիր՝

071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների  
ճարտարագիտություն

Որակավորում՝

ճարտարագիտության մագիստրոս

Երևան 2023

<b>Բովանդակություն</b>	
	Ծրագրի ընդհանուր բնութագիրը
	Ծրագրի նպատակը
	Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները
	Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաները /իրավասությունը/
	Շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաները իրավասությունը
	Ծրագրի կառուցվածքը
	Դասավանդման և ուսումնառության մեթոդները
	Գնահատման մեթոդները
	Կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող պրակտիկան
	Մասնագիտական գործունեության ոլորտը և ապագա կարիերայի հնարավորությունները
	ՄԿԾ իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ
	ՄԿԾ իրականացման համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմին ներկայացվող պահանջներ
	Հավելվածներ
	Հավելված 1. Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնական պլան
	Հավելված 2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների իրավասությունների համապատասխանության կառուցվածքային մատրից
	Հավելված 3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ)

<b>1. Ծրագրի ընդհանուր բնութագիրը</b>	
<b>Ֆակուլտետ</b>	Ագրարային ճարտարագիտության
<b>Ամբիոն</b>	Ջրային և հողային ռեսուրսների կառավարման
<b>Ոլորտ/ Միջոլորտային բնագավառ</b>	

Մասնագիտության (մասնագիտացման) անվանումը և դասիչը	071804.00.7 Ագրարային ճարտարագիտություն	
Մասնագիտության կրթական ծրագիր	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն	
ՄԿԾ պատասխանատու/-ներ	Եղիազարյան Գուրգեն Մարկոսի, գ. գ. դ., պրոֆ. Ալոյան Նաիրա Գրիգորի, տ. գ. թ., դոցենտ	
Ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար)	Առկա, հեռակա	
Շնորհվող որակավորումը (բակալավր, մագիստրոս)	<b>Ճարտարագիտության մագիստրոս</b>	
Ուսուցման լեզուն	հայերեն	
Ծրագրի մուտքի ընդհանուր պահանջներ	Բակալավրի կրթական աստիճան	
Ուսուցման ընդհանուր տևողություն/ կրեդիտ	առկա	հեռակա
	1 տարի	1,5 տարի
	60 կրեդիտ	
Որից՝	27 շաբաթ, 720 ժամ	8 շաբաթ, 238 ժամ
Լսարանային ուսուցում (ա.թ.՝ տեսական, գործնական, լաբորատոր)		
Ինքնուրույն աշխատանք	822 ժամ	1262 ժամ
Քննաշրջան	6 շաբաթ	9 շաբաթ
Պրակտիկա	Գիտահետազոտական, 2 շաբաթ, 2 կրեդիտ	
Ամփոփիչ ատեստավորում	Թեզի պաշտպանություն, 4 շաբաթ, 8 կրեդիտ	
Արձակուրդ	4 շաբաթ	54 շաբաթ

## 2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է հողային և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում պատրաստելու ճարտարագետ մագիստրոսներ, որոնք կունենան պատշաճ հմտություններ արդի թվային տեխնոլոգիաներով, համակարգչային ծրագրերով գիտահետազոտական, մոնիթորինգային, նորարարական և փորձաօգնությունային աշխատանքներ կատարելու ոռոգման, ցամաքուրդային համակարգերի, հիդրոտեխնիկական կառուցվածքների, ջրային և հողային հաշվեկշռի մշակման, մակերեսային հոսքի կանխատեսման, հողերի օգտագործման պլանավորման, ճարտարագիտական կառույցների գեոդեզիական ապահովման, հողաշինարարական և անշարժ գույքի կադաստրի ոլորտի աշխատանքների

թվայնացման, ինտեգրված կադաստրի վարման և դրանց կիրառության բնագավառներում:

**3. Ծրագրի տարբերակիչ առանձնահատկությունները և մրցակցային առավելությունները**

Հողային և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի ճարտարագետ մագիստրոսները ստացած գիտելիքներով հնարավորություն կունենան իրականացնելու նորարական տեխնոլոգիաներով հետազոտական, նախագծային, փորձացուցադրական, փորձագիտական և խորհրդատվական աշխատանքեր կլիմայի գլոբալ փոփոխության ազդեցության ներքո ջրային և հողային պաշարների օգտագործման դիվերսիֆիկացման, կանխատեսման և կարգավորման ծրագրերի մշակման և դրանց իրականացման համար: Տիրապետելով ագրոպարենային ոլորտում կիրառվող ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի ուսումնասիրման գիտական, վիճակագրական վերլուծական և փորձարարական մեթոդներին կկարողանա համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական մակարդակներում իրականացնելու միջազգային չափորոշիչներին համապատասխան տեխնիկական, կազմակերպչական և բնապահպանական փորձագիտահետազոտական աշխատանքներ:

**4. Շրջանավարտի ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ)**

**Ակնկալվում է, որ ՄԿԾ հաջող ավարտին ուսանողը կկարողանա.**

- ԸԿ1. վերլուծել ջրատնտեսական համակարգերի, հողաշինարարության նախագծման, շինարարության, շահագործման սկզբունքները, ծավալելու գործունեություն դրանց կատարելագործելու համար,
- ԸԿ2. գնահատել հողաշինարարական և ջրատնտեսական պետական և մասնավոր ծրագրերի ազդեցությունը հողային և ջրային պաշարների կառավարման վրա,
- ԸԿ3. կիրառել նորարական լուծումներ հողերի մելիորացիայի, գյուղատնտեսական նշանակության հողերի կազմակերպման, հողերի հաշվառման և գնահատման նպատակով,
- ԸԿ4. օգտագործել թվային տեխնոլոգիաները, նախագծերի կառավարման նորագույն մեթոդները և համակարգչային ծրագրերը ջրային և հողային պաշարների կայուն կառավարման մոդելների մշակման համար,
- ԸԿ5. ձևակերպել հողային և ջրային պաշարների ոլորտում գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ առևտրայնացման, պետական, միջպետական, մասնավոր և տարաբնույթ ծրագրերի մշակման, հողաբարելավման և հողաշինարարության հարցերի ծրագրավորման, գնահատման և պահպանման, ներկայացման և իրականացման համար,
- ԸԿ6. կիրառել միջազգային շուկաներին ինտեգրման համար հողային և ջրային պաշարների արդյունավետ օգտագործման, ագրարային ճարտարագիտության ոլորտին վերաբերող հիմնական նորմատիվային և միջազգային փաստաթղթերը:

**5. ՄԿԾ շրջանավարտի մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)**

**ՄԿԾ ավարտին ակնկալվում է, որ շրջանավարտը.**

**ՄԿ1 կկիրառի** գեոդեզիայի, մելիորացիայի, հիդրոտեխնիկական կառուցվածքների,

	<p>ջրատնտեսական համակարգերի, հողաշինարարության և անշարժ գույքի կադաստրի վարման առաջավոր մեթոդները ջրային և հողային պաշարների կառավարման հետազոտական աշխատանքներում,</p> <p><b>ՄԿ2 կկիրառի</b> համակարգչային տեխնոլոգիաները, տնտեսագիտական, մաթեմատիկական վիճակագրության և մոդելավորման մեթոդները՝ մասնագիտական խնդիրների ուսումնասիրման, հողային և ջրային պաշարների տարածական տվյալների բազայի ստեղծման ճարտարագիտական նախագծերի և մոդելների ստեղծման նպատակով,</p> <p><b>ՄԿ3. կկատարի</b> հողային և ջրային պաշարների տարածական տեղաբաշխվածության, դրանց օգտագործման և կառավարման թվային քարտեզագրում,</p> <p><b>ՄԿ4. կմեկնաբանի</b> ջրատնտեսական համակարգերի, հողային կադաստրի, անշարժ գույքի կադաստրի վարման աշխատանքների ուժեղ և թույլ կողմերը, ելնելով առկա հողային և ջրային պաշարների սահմանափակ օգտագործման, պահպանության և շահագործման հնարավորություններից, վարվող հողաշինարարության, հողային կադաստրի քաղաքականությունից, անշարժ գույքի կառավարման, տնօրինման, տիրապետման գործառույթներից և տնտեսական նպատակահարմարությունից,</p> <p><b>ՄԿ5. կկատարի</b> դատողություններ գոյություն ունեցող համակարգերի և հիդրոտեխնիկական կառուցվածքների, հողային կադաստրի, անշարժ գույքի, գյուղատնտեսական մշակաբույսերի ջրման եղանակների վերաբերյալ, հետազոտելով և կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով,</p> <p><b>ՄԿ6. կկատարի</b> ջրային և հողային պաշարների կառավարման ոլորտում ճարտարագիտական տեխնիկական խնդիրների բացահայտում, դրանց արդյունավետ հետազոտման մեթոդոլոգիայի մշակում, հետազոտական, արտադրական ուսումնասիրություններ, կանխատեսումներ, հողային և ջրային պաշարների կառավարման տեխնիկական խնդիրների լուծման համար,</p> <p><b>ՄԿ7. կկիրառի</b> ունակություններ ազատ շփվելու միջազգային գիտակրթական կառույցների մասնագետների հետ առկա խնդիրների և դրանց լուծման շուրջ,</p> <p><b>ՄԿ8. կվերլուծի</b> միջազգային փորձի հիման վրա ջրատնտեսական համակարգերի կառուցման, շահագործման աշխատանքները, հողաշինարարական նախագծման տեխնիկական, կազմակերպչական, ղեկավարման, վերակառուցման գործընթացները,</p> <p><b>ՄԿ9. կկիրառի</b> նորագույն եղանակներ և տեխնոլոգիաներ հողային և ջրային պաշարների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման և հողերի բերրիության բարձրացման ուղղությամբ, հաշվի առնելով ֆերմերային տնտեսությունների առանձնահատկությունները:</p>
<p><b>ՄԿԾ վերջնարդյունքներ՝ ըստ կոմպետենցիաների խմբերի</b></p>	
<p><b>ՄԿ 1 վերջնարդյունքներ</b></p>	
<p>1.1</p>	<p>Կիրառել մասնագիտական գիտելիքները տեղագրական քարտեզների մշակման, մելորատիվ կառուցվածքների հետազոտման և նախագծման ասպարեզում:</p>

1.2	Կիրառել համակարգչային գիտելիքները հողային և ջրային պաշարների համապարփակ կառավարման խնդիրների լուծման համար:
1.3	Վերլուծել հողային կադաստրի վարման գործընթացը և անշարժ գույքի շուկան աշխատանքների բարելավման նպատակով:
1.4	Կատարել ջրատնտեսական, հողաշինարարական օբյեկտների նախագծման, իրականացման վերաբերյալ որակական վերլուծություններ տարբեր կառուցվածքների շահագործման և աշխատանքի արտադրողականության բարձրացման ուղղությամբ:
1.5	Մշակել մեթոդներ ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի հետազոտման նպատակով:
<b>ՄԿ 2 վերջնարդյունքներ</b>	
2.1	Կիրառել տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման մեթոդները ջրային և հողային պաշարների արդյունավետ կառավարման ոլորտում:
2.2	Կիրառել մաթեմատիկական մոդելավորման և վիճակագրության մեթոդները մելիորատիվ, հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման և հետազոտման նպատակով:
2.3	Ցուցաբերել համակարգչային տեխնոլոգիաների կիրառման վերլուծական մտածողություն ջրատնտեսական և հողաշինարարական խնդիրների մոդելավորման և ճարտարագիտական նախագծերի մշակման համար:
2.4	Օգտագործել տարածական տվյալների բազան հողային և ջրային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիական խնդիրների լուծման նպատակով:
2.5	Արժևորել հողային և ջրային պաշարների կառավարման ճարտարագիտական նորարական լուծումների դերը ագրոպարենային ոլորտի տարբեր ճյուղերի կայուն զարգացման համար:
2.6	Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաները հողային և ջրային պաշարների տվյալների բազայի թարմացման, պահպանման և մասնագիտական խնդիրների լուծման նպատակով:
<b>ՄԿ 3 վերջնարդյունքներ</b>	
3.1	Վերլուծել հողային և ջրային պաշարների տարածական տեղաբաշխվածությունը:
3.2	Հետազոտել հողային և ջրային պաշարների կառավարման ռիսկերը:
3.3	Քարտեզագրել հողային և ջրային պաշարները թվային եղանակով:
3.4	Կատարել հողային և ջրային պաշարների հեռանկարային օգտագործման կանխատեսումներ:
3.5	Հետազոտել թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ջրօգտագործման հավաքագրված ցուցանիշները:

3.6	Կիրառել թվայնացված տարածական տվյալները հողաշինարարական և ջրատնտեսական տարբեր խնդիրների հետազոտման նպատակով:
3.7	Վերլուծել թվայնացված քարտեզագրական նյութերի առավելությունները և թերությունները:
<b>ՄԿ 4 վերջնարդյունքներ</b>	
4.1	Բացահայտել ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի ուժեղ և թույլ կողմերը:
4.2	Վերլուծել հողային և ջրային պաշարների օգտագործման սահմանափակ հնարավորությունները դրանց շահագործման և պահպանության պայմաններից:
4.3	Հիմնավորել ջրատնտեսական համակարգերի առանձին կառուցվածքների նախագծման նպատակահարմարությունը տնտեսական արդյունավետության պայմանից:
4.4	Գնահատել հողային և ջրային պաշարների կառավարման ցուցանիշների համալիր վերլուծության արդյունքները:
<b>ՄԿ 5 վերջնարդյունքներ</b>	
5.1	Վերլուծել ջրատնտեսական, ջրաշինարարական և հողաշինարարական նախագծերը:
5.2	Կատարել դատողություններ տարբեր կառուցվածքների ճարտարագիտական, բնապահպանական և տնտեսական նպատակահարմարության պայմաններից:
5.3	Կիրառել հողային կադաստրի տվյալները հողաբարելավման նախագծերի մշակման համար:
5.4	Կատարել մշակաբույսերի ջրման տեխնոլոգիաների հետազոտում:
5.5	Իրականացնել հետազոտություն հողային և անշարժ գույքի կադաստրի գնահատման ոլորտներում:
<b>ՄԿ 6 վերջնարդյունքներ</b>	
6.1	Իրականացնել հողային և ջրային պաշարների կառավարման ոլորտում մոնիթորինգային աշխատանքներ:
6.2	Համեմատել տարբեր մեթոդներով հողային և ջրային պաշարների կառավարման խնդիրների լուծման արդյունքները:
6.3	Գնահատել հողաբարելավման աշխատանքներն արտադրությունում:
6.4	Կանխատեսել հողային և ջրային պաշարների հեռանկարային օգտագործումը:
<b>ՄԿ 7 վերջնարդյունքներ</b>	
7.1	Տիրապետել հողային և ջրային պաշարների կառավարման միջազգային գիտակրթական կառույցների մասնագիտական գործունեությանը:
7.2	Համագործակցել միջազգային մասնագիտական, հասարարական, պետական կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ:
7.3	Իրականացնել համատեղ ծրագրեր միջազգային չափանիշներին համապատասխան:

<b>ՄԿ 8 վերջնարդյունքներ</b>	
<b>8.1</b>	Ցուցաբերել միջազգային փորձի հիման վրա ջրատնտեսական և հողաշինարարական համակարգերի կառավարման ունակություններ:
<b>8.2</b>	Տիրապետել կառուցվածքների, նախագծման տեխնիկական վերագինման հողաշինարարական աշխատանքների ղեկավարման գործընթացներին:
<b>8.3</b>	Տեղայնացնել հողաշինարարական և ջրատնտեսական աշխատանքների ղեկավարման միջազգային փորձը:
<b>ՄԿ 9 վերջնարդյունքներ</b>	
<b>9.1</b>	Կիրառել նորագույն եղանակներ և տեխնոլոգիաներ հողային և ջրային պաշարների օգտագործման կազմակերպման, նախագծման և շինարարության ոլորտում:
<b>9.2</b>	Պլանավորել մշակաբույսերի բերքատվությունը կախված ջրատնտեսական և հողաշինարարական միջոցառումների բնույթից և բովանդակությունից:
<b>9.3</b>	Իրականացնել հողերի բերրիության բարձրացման հետազոտական աշխատանքներ, հաշվի առնելով ֆերմերային տնտեսությունների կազմակերպատնտեսական առանձնահատկությունները:

<b>6. Ծրագրի կառուցվածքը</b>	
<b>6.1. Ուսումնական պլան (Հավելված 1)</b>	
<b>6.2. Մասնագիտության կրթական ծրագրի բաղադրիչների և շրջանավարտի կոմպետենցիաների համապատասխանության կառուցվածքային մատրից (Հավելված 2)</b>	
<b>6.3. Բենչմարքինգ (ՄԿԾ-ի համահունչությունը նմանատիպ այլ ճանաչված ՄԿԾ-ների հետ (Հավելված 3)</b>	
<b>6.4. Ծրագրի առարկաների համառոտ նկարագիրը</b>	
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Գիտահետազոտական մեթոդներ և գիտական արդյունքների առևտրայնացում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին



Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Տեխնիկական վիճակագրություն»
Դասընթացի նպատակը	<p>Դասընթացը նպատակ ունի ուսանողների մոտ ձևավորել գիտական գաղափարի իրացման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներ, ուսումնասիրել գիտական հետազոտությունների մեթոդիկան, հետազոտական աշխատանքի փուլերը և հաջորդականությունը, գիտափորձական հետազոտությունների, գիտափորձերի պլանավորման տեսության հիմունքների, գիտափորձերի օպտիմալ պլանի կառուցման գիտական ու մեթոդական հիմունքների և ստացված արդյունքների մշակման եղանակների վերաբերյալ գիտելիքներ: Օգնել կիրառելու ստացված գիտելիքները գիտափորձերի պլանավորման կիրառական խնդիրներ կազմելիս: Սովորեցնել գաղափարի առևտրայնացմանը միտված քայլերի հաջորդականությունը՝ արտոնագրաունակությունից մինչև ապրանքային փուլ հասնելու միջակայքում:</p>
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կիրառել գիտափորձերի պլանավորման եղանակները, օպտիմալ պլանների կառուցման մեթոդները և սկզբունքը,</li> <li>• կազմակերպել հետազոտություններ գիտական և ճարտարագիտական տարբեր խնդիրներ լուծելու համար,</li> <li>• վերլուծել ստացված գիտափորձական տեղեկությունը օգտագործելով ալգորիթմեր և մեթոդներ, որոնք համապատասխանում են չափման պլանին և խնդրի առանձնահատկություններին;</li> <li>• իմանալ գիտական հետազոտական աշխատանքի կառուցվածքային և փուլային առանձնահատկությունները,</li> <li>• տիրապետել հողային և ջրային ռեսուրսների կառավարման մեջ որակական ցուցանիշների բացահայտման և չափման մեթոդները, փոփոխման օրինաչափությունները, գիտական հետազոտական աշխատանքների (ԳՀԱ) թեմայի, նպատակի և խնդիրների ճիշտ ձևակերպման, տեսական և ստացված փորձարարական ԳՀԱ-ի կատարման և ստացված արդյունքների մշակման ու վերլուծության, եզրահանգումների և առաջարկների սահմանման մեթոդաբանություններին,</li> <li>• ձևակերպել ԳՀԱ-ի ներդրման և արդյունավետության հարցերը, ինչպես նաև մագիստրոսական թեզը, գիտական աշխատանքները (հոդվածներ, արտոնագրեր) և այլն:</li> </ul>

<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. տեսական նյութի և գործնական աշխատանքների բացատրություն, ցուցադրական նյութերի ներկայացում և բացատրություն, մասնագիտական փորձերի անցկացում:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. ուսումնամեթոդական գրականության օգտագործում, գործնական խնդիրների լուծում:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Հաճախումներ դասերին, ակտիվություն, հնքնություն և անհատական աշխատանքների հանձնում և պաշտպանություն, միջանկյալ և ամփոփիչ քննություններ գրավոր եղանակով:</p>
<p><b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b></p>	
<p>Մասնագիտական կրթական ծրագիրը</p>	<p>071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն</p>
<p>Դասընթացի ծածկագիրը</p>	
<p>Դասընթացի անվանումը</p>	<p><b>Հատուկ գետային և ստորգետնյա հիդրոտեխնիկական կառուցվածքներ</b></p>
<p>Դասընթացի տեսակը</p>	<p>Պարտադիր</p>
<p>Դասավանդման լեզուն</p>	<p>հայերեն</p>
<p>Կրեդիտները (ECTS)</p>	<p>4</p>
<p>Դասընթացի անցկացման կիսամյակը</p>	<p>1-ին</p>
<p>Մուտքային պահանջներ</p>	<p>«Բարձրագույն մաթեմատիկա», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Հիդրավլիկա», «Ճարտարագիտական երկրաբանություն», «Տեսական մեխանիկա»:</p>
<p>Դասընթացի նպատակը</p>	<p>Դասընթացը նպատակ ունի զարգացնել հատուկ գետային և ստորգետնյա հիդրոտեխնիկական կառույցների նախագծման ժամանակակից ուղղությունները, ուսումնասիրել քարքարոտ հիմքերի վրա բետոնե պատվարների, բետոնե պատնեշներով հիդրոէլեկտրակայաններում ջրհեղեղների, ամբարտակների, հիդրոէլեկտրակայանների հատուկ կառույցների հետ կապված հիմնական խնդիրները, ուսումնառուին տալ կառուցվածքների հաշվարկման ընդհանուր սկզբունքների վերաբերյալ գիտելիքներ, կատարելու հիդրոտեխնիկական թունելների նախագծման ուսումնասիրություն:</p>
<p>Դասընթացի</p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը</b></p>

վերջնարդյունքները	<p><b>Կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ուսումնասիրել տարբեր նախագծերի բետոնե պատվարների, հիդրոէլեկտրակայանների ամբարտակների ջրառի և հատուկ կառուցվածքների նախագծման, հիդրոտեխնիկական կառույցների բեկորներից, տիղմից և սառույցից պաշտպանելու, գետի հիդրոէլեկտրակայաններում լողացող բեկորների հավաքման և մշակման խնդիրները,</li> <li>• տիրապետել ինքնահոս ամբարտակների լարվածության վիճակի հաշվարկման հիմնական մեթոդներին և սկզբունքներին,</li> <li>• իրականացնել թունելների երեսպատման ստատիկական հաշվարկներ,</li> <li>• կատարել կառուցվածքների շահագործման վերլուծություն,</li> <li>• համեմատել նախագծային լուծումները,</li> <li>• լուծել հատուկ գետային և ստորգետնյա հիդրոտեխնիկական կառույցների նախագծման ոլորտում կարևոր կիրառական խնդիրներ:</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. ուսումնամեթոդական գրականություն, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանք, միջանկյալ և ամփոփ քննություններ:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Տարածական տվյալների մշակում և կառավարում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր», «Հեռազննում», «Կիրառական ինֆորմատիկա»:

Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ծանոթացնել մագիստրանտներին տարածական տվյալների ենթակառուցվածքի, ազգային գեոպորտալի ոլորտին առնչվող գործող օրենսդրությանը, միջազգային նորմերին և ստանդարտներին, տեխնիկական և ծրագրային ապահովումներին:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կիրառել համապատասխան ծրագրային ապահովումները, ԵՏ համակարգերի տարածական տվյալների ենթակառուցվածք, խմբեր կամ ենթախմբեր ձևավորելիս,</li> <li>• կիրառել տարածական տվյալների ենթակառուցվածքներն ու ստանդարտները սահմանող օրենսդրությունը, ոլորտը կարգավորող նորմատիվաիրավական ակտերը,</li> <li>• ներկայացնել տարածական տվյալների ազգային և միջազգային ստանդարտները,</li> <li>• տարածական տվյալների ենթակառուցվածքի թեմատիկ շերտերի վարման առանձնահատկությունները կիրառել հողային և ջրային պաշարների արդյունավետ կառավարման ոլորտներում,</li> <li>• կիրառել ՀՁ նյութերն ու համապատասխան ծրագրային ապահովումները, ԵՏ համակարգերը տարածական տվյալների որոշ թեմատիկ շերտեր ձևավորելիս:</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ. դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր, գործնական և անհատական աշխատանքներ՝ ԵՏՀ ծրագրային ապահովումների միջոցով:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. Էլեկտրոնային ուսուցում, բանավոր մեթոդ, բացատրական մեթոդ, վերլուծական մեթոդ, ցուցադրման մեթոդ, մտազրոհ, խնդրի վրա հիմնված ուսուցում:</p>
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն և խմբային աշխատանքների էլեկտրոնային տարբերակով ներկայացում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ՝ համալսարանում գործող գնահատման կարգին համապատասխան:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Համակարգչային նախագծում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր

Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	1-ին
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Գրաֆիկայի հիմունքներ», «Համակարգչային գրաֆիկա», «Տեսական մեխանիկա», «Կիրառական ինֆորմատիկա», «Նյութերի դիմադրություն», «Նյութագիտություն և շիննյութեր»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ագրարային ճարտարագիտության մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում Solid Works ավտոմատացված նախագծման համակարգի ուսումնասիրման և յուրացման արդյունքում ապահովելու արդյունաբերության, գյուղատնտեսության ու հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտության ոլորտներում կիրառվող մեխանիզմների, մեքենաների, սարքավորումների, դրանց հանգույցների ու մեքենամասերի նախագծման, հաշվարկման, պատրաստման, շահագործման ու նորոգման հիմունքներին տիրապետող մեքենաշինական ուղղվածության ճարտարագետ-մագիստրոս՝ ունակ մասնագիտական հետագա գործառույթներում կիրառելու ստացված ճարտարագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>ներկայացնել համակարգչային նախագծման և տվյալների բազայի կառավարման տարբեր համակարգերի դասակարգումը, տեխնիկական բնութագրերն ու հնարավորությունները,</li> <li>իրականացնել ուսումնագիտահետազոտական, փորձարարական և նախագծային աշխատանքներ՝ գործնականում ինքնուրույն գծագրել մեքենաների ու մեխանիզմների կառուցվածքային և կինեմատիկական սխեմաներ, մեքենաների, դրանց հանգույցների և մեքենամասերի բանվորական գծագրեր,</li> <li>կիրառել համակարգչային տեխնոլոգիաների և ավտոմատ համակարգերի վերլուծությանն ու սինթեզի տեղեկատվական և ցանցային տեխնոլոգիաներ՝ իրականացնելով հանձնարարված թեմայի հետազոտման և նախագծման բոլոր փուլերի ուսումնասիրումը,</li> <li>նախագծել մեքենաներ, մեխանիզմներ, հանգույցներ և մեքենամասեր՝ պահպանելով դրանց սինթեզի և վերլուծության,</li> </ul>

	<p>նախագծման ու հաշվարկման կիրառական խնդիրների լուծման մեթոդներն և ալգորիթմները,</p> <ul style="list-style-type: none"> <li>• SOLIDWORKS® Simulation-ի գործիքների պորտֆոլիոն կիրառել վիրտուալ փորձարկման միջոցով նախագծված արտադրանքի վարքագիծը իրական միջավայրում ճշգրիտ կանխատեսելու և ծախսատար վերամշակումից խուսափելու համար,</li> <li>• կիրառել նախագծային փաստաթղթերի միասնական համակարգի, հաշվետվական փաստաթղթերի և դրանց կազմի պատրաստման, կանոնների, կարգավորման, հաշվարկանախագծային գործունեության օրենսդրության հիմունքները,</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>տեսական նյութի ներկայացում և բացատրություն, սահիկահանդեսի ցուցադրում, ուսուցողական ֆիլմերի, տեսանյութերի դիտում, թեմատիկ բացատրացուցադրական, արտալսարանային քննարկումներ և բանավեճեր, հարց և պատասխան, թիմային աշխատանք, մտաբերում, մտազրոհ:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ուսումնամեթոդական և էլեկտրոնային գրականության ուսումնասիրություն, մասնագիտական տեսանյութերի դիտում, ինքնուրույն աշխատանքների կատարում, ինտերակտիվ քննարկումներ:</p>
Գնահատման մեթոդները	Ինքնուրույն աշխատանքի զեկուցում, ռուբրիկների կիրառում, լաբորատոր զեկույց, ընթացիկ և ամփոփիչ քննություններ:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>ճարտարագիտական նախագծերի կառավարում PMP</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	6
Դասընթացի անցկացման կիսամյակը	1 -ին
Մուտքային պահանջներ	«Գյուղատնտեսության էկոնոմիկա», «Ձեռնարկատիրություն»:
Դասընթացի	Դասընթացը նպատակ ունի մագիստրանտների մոտ ձևավորել

<p>նպատակը</p>	<p>ճարտարագիտական նախագծերի կառավարման ժամանակակից մոտեցումների համակարգված գիտելիքներ, զարգացնել հմտություններ և կարողություններ ճարտարագիտական նախագծերի կառավարման մեթոդների, տեխնոլոգիաների ընտրության վերաբերյալ, տալ հիմնարար գիտելիքներ գործնականում իրականացվող նախագծային գործընթացների և դրանց ոլորտների վերաբերյալ: Ձևավորել նախագծերի ընտրության, մշակման և կառավարման հմտություններ, ռազմավարության մշակման, որակի վերահսկողության, նախագծի գնահատման և ավարտին հասցնելու գործնական կարողություններ:</p>
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• պարզաբանել ճարտարագիտական նախագծի և ծրագրի տարբերությունները, նախագծի նպատակների SMART չափանիշները,</li> <li>• մեկնաբանել ճարտարագիտական նախագծի կյանքի ցիկլը (Lifecycle), նախագծերի կառավարման հիմնական և օժանդակ գործընթացները, նախագծի գիտելիքի ոլորտները (Knowledge Areas) և կազմակերպական կառուցվածքը,</li> <li>• մշակել տեղեկատվությունը Microsoft Project, Գանտի դիագրամ, ցանցային և ռեսուրսների գրաֆիկների ու այլ միջոցներով,</li> <li>• գնահատել ճարտարագիտական նախագծի արժեքը, նախագծի ֆինանսավորման փուլերը, ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրները,</li> <li>• կատարել նախագծի ռիսկերի քարտեզագրում, ազդեցության գնահատում, նախագծի ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքակազմի ձևավորում,</li> <li>• տարբերակել ճարտարագիտական նախագծի որակի վրա ազդող գործոնները և որակի վերահսկողության փուլերը:</li> </ul>
<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. տեսական նյութի բացատրություն, երկխոսություն, ցուցադրական նյութի ներկայացում և քննարկումներ, ուղեղային գրոհի, իրավիճակային վերլուծության մեթոդների կիրառմամբ, նյութի բացատրություն տարբեր ցուցադրական նյութերով (համակարգչային ցուցադրում, տեսաֆիլմեր, ցուցանմուշներ, պաստառներ և այլն), վարպետաց դասի անցկացման կազմակերպում ոլորտի առաջատար մասնագետների կողմից</p> <p>Ուսումնառության մեթոդներ. մասնագիտական, ուսումնամեթոդական, էլեկտրոնային գրականության ուսումնասիրում, առաջադրանքների, նախագծային</p>

	աշխատանքի կատարում և PPT շնորհանդեսով ներկայացում, ինտերակտիվ քննարկումներ, անհատական և խմբային աշխատանքներ:
Գնահատման մեթոդները	Ընթացիկ բանավոր բլից հարցումներ, հմտությունների թեստեր, առաջադրանքների գնահատում, առաջադրված իրավիճակային քեյսերին մագիստրանտների տված լուծումների գնահատում, նախագծային աշխատանքների ներկայացման գնահատում, միջանկյալ և ամփոփիչ քննություններ:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Բաց հունների հիդրավլիկա</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	1 –ին
Մուտքային պահանջներ	«Հիդրավլիկա», «Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Ստորերկրյա ջրային ավազանի կառավարում», «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ուսումնասիրել անհավասարաչափ շարժումը բաց հուններում, կատարել անհավասարաչափ շարժման որակական անալիզ, որոշել ազատ մակերևույթի կորի տեսքը, սահմանել հիդրոտեխնիկական և հիդրոմելիորատիվ կառուցվածքների չափերը, ելնելով աէրացիոն երևույթից և շահագործման անվտանգությունից:
Դասընթացի վերջնարդյունքները	<b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b> <ul style="list-style-type: none"> <li>• որոշել անհավասարաչափ շարժման պարամետրերը, ըստ դրանց տեսակների,</li> <li>• կատարել անհավասարաչափ շարժման որակական անալիզ,</li> <li>• կառուցել անկման և դիմհարի կորերը, ըստ տիրույթների,</li> <li>• ինտեգրել անհավասարաչափ շարժման դիֆերենցիալ ըավասարումն ըստ Պավլովսկու և Բախմետսկի,</li> <li>• ջրամբարային հիդրոհանգույցում հաշվարկել կառուցվածքի</li> </ul>



	շինարարական բարձրությունը հեղեղային և սելավային ելքերի դեպքում՝ հաշվի առնելով նաև աէրացիոն երևույթը:
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց: Ուսումնառության մեթոդներ. կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, օգտվել ուսումնամեթոդական գրականությունից:
Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանք, միջանկյալ և ամփոփ քննություններ: Գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով ըստ համապատասխան գնահատման սանդղակի:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Հողերի մելիորատիվ ռեժիմների օպտիմալացման տեսություն</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Մելիորացիա և հողերի վերականգնում», «Ագրոնոմիայի հիմունքներ», «Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում», «Ճարտարագիտական երկրաբանություն»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի սովորեցնել մագիստրանտներին լավարկել հողի մելիորատիվ ռեժիմները (ջրային, օդային, աղային, սննդային, ջերմային) կախված հողային, կլիմայական, հիդրոերկրաբանական պայմաններից և մշակաբույսի տեսակից:
Դասընթացի վերջնարդյունքները	<b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b> <ul style="list-style-type: none"> <li>• թվարկել հողերի մելիորատիվ ռեժիմի բաղկացուցիչ մասերը (ջրային, աղային, սննդային, օդային և ջերմային),</li> <li>• նկարագրել մելիորատիվ ռեժիմի օպտիմալացման չափորոշիչները և մելիորատիվ ռեժիմի առանձին բաղկացուցիչների օպտիմալացման</li> </ul>

	<p>նպատակը և ուղիները,</p> <ul style="list-style-type: none"> <li>• գնահատել հողերի մելիորատիվ ռեժիմի ազդեցությունը մշակաբույսերի բերքատվության և շրջակա միջավայրի վրա,</li> <li>• տիրապետել մելիորատիվ ռեժիմի առանձին բաղկացուցիչ մասերի դինամիկայի մոդելավորման տեսությանը և դրանց բաղկացուցիչների միջև փոխազդեցության չափանիշներին,</li> <li>• կազմել ջրի, աղերի, սննդատարրերի տեղաշարժման դիֆերենցիալ հավասարումները, եզրային խնդիրների սահմանային պայմաններին համապատասխան և լուծել դրանք վերլուծական և համակարգչային հավելվածների կիրառմամբ,</li> <li>• արժևորել ստացված լուծումների իդենտիֆիկացիոն և վերիֆիկացիոն գնահատականը:</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ.</p> <p>դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ.</p> <p>ուսումնամեթոդական գրականություն, անհատական աշխատանք, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Ռուբրիկների կիրառում, անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Հողաշինարարության մոդելավորում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Հողաշինարարություն», «Մելիորացիա և հողերի վերականգնում», «Գյուղատնտեսության էկոնոմիկա», «Հողային կադաստրի վարում և մոնիտորինգ»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի սովորեցնել մագիստրանտներին հողային և ջրային պաշարների կառավարման բնագավառում լավարկման

	<p>(օպտիմալացման) խնդիրների լուծման հիմնական սկզբունքները տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման և գծային ծրագրավորման մեթոդների կիրառմամբ: Գծային և ոչ գծային հավասարումների կամ անհավասարումների համակարգերի լուծման մեթոդների մասին ձեռք բերված գիտելիքները և հմտությունները մագիստրանտին հնարավորություն կտան դրանք կիրառել հողային և ջրային պաշարների կառավարման լավարկված մոդելների մշակման և դրանց իրականացման համար:</p>
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• թվարկել հողաշինարարական խնդիրների մոդելավորման սկզբունքները և տնտեսագիտամաթեմատիկական հասկացողությունները (նպատակային ֆունկցիա, փոփոխականներ, սահմանափակումներ, ֆունկցիայի ածանցյալ, ամենամեծ և ամենափոքր արժեքներ, ֆունկցիայի վարքը, բացարձակ սխալ, հարաբերական սխալ, միջին քառակուսային սխալ և այլն),</li> <li>• նկարագրել տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման էությունը, հողատեսքերի հողաշինարարական կազմակերպման ժամանակ կիրառվող տնտեսագիտամաթեմատիկական մոդելների առանձնահատկությունները և տարբեր գործոնների ազդեցությունը հողօգտագործման ցուցանիշների վրա,</li> <li>• կազմել հողային պաշարների օպտիմալ օգտագործման պլան-սխեմաներն և չափանիշները,</li> <li>• մշակել հողաշինարարական վիճակագրական տվյալները և կազմել տնտեսավիճակագրական մոդելներ,</li> <li>• կազմել հողատեսքերի օպտիմալ տրանսֆորմացիայի տնտեսագիտամաթեմատիկական մոդելները և սահմանափակումների հավասարումները,</li> <li>• լուծել համակարգչային հավելվածների միջոցով կազմված հավասարումների և անհավասարությունների համակարգը:</li> </ul>
<p>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</p>	<p>Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. ուսումնամեթոդական գրականություն, անհատական աշխատանք, համացանց:</p>
<p>Գնահատման մեթոդները</p>	<p>Անհատական աշխատանքի ներկայացում, բազմագործոնային համակարգ (100 բալանոց սանդղակով):</p>
<p><b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b></p>	

Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Հիդրոլոգիական մոդելավորում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Հիդրոլոգիա և հոսքի կանոնավորում», «Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Բաց հունների հիդրավլիկա»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի ճշգրտել մակերևութային հոսքը կախված հիդրոլոգիական վերլուծությունից (Դոլգովի տեսություն), սահմանել մնացորդային հոսքի առկայությունը, գենետիկ բանաձևի կիրառման միջոցով որոշել տարածքից դուրս եկող հոսքը:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>ներկայացնել տեղումներից մակերևութային հոսքի առաջացման երևույթը,</li> <li>հիդրոլոգիական մոդելավորման մեջ կիրառելով գենետիկ բանաձևը, Դուամելի ինտեգրալի միջոցով հաշվարկել մակերևութային հոսքը,</li> <li>կատարել հիդրոլոգիական հաշվարկներ տեղումներից առաջացած մակերևութային հոսքի քանակության ճշգրտման համար,</li> <li>համադրել տարածքի հատակագծերը իզոխրոնների հետ Դոլգովի տեսության համաձայն,</li> <li>ներկայացնել հեղեղային ելքերի հաշվարկն ըստ ապահովվածության տոկոսի:</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ. դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ. կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, օգտվել ուսումնամեթոդական գրականությունից:</p>

Գնահատման մեթոդները	Անհատական աշխատանի հանձնում, միջանկյալ և ամփոփ քննություն: Գնահատականը ձևավորվում է բազմագործոնային համակարգով, ըստ համալսարանում գործող գնահատման սանդղակի:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Մոդելավորումը հիդրոտեխնիկայում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	3
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	«Բարձրագույն մաթեմատիկա», «Հիդրավիկա», «Տեսական մեխանիկա», «Ճարտարագիտական գեոդեզիա», «Համակարգչային գրաֆիկա (AUTOCAD)»:
Դասընթացի նպատակը	Դասընթացը նպատակ ունի կատարելագործել ինժեներական պրակտիկայում հիդրոտեխնիկական կառուցվածքների դինամիկ վարքագծի մոդելավորման մեթոդաբանությունը, համակարգչային հատուկ ծրագրերի միջոցով (PLAXIS 2D, Civil 3D, Redit և այլն), նախագծել և հաշվարկել ապագա պատվարների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների կայունությունը, ստանալով վերջնական կառուցվածքի մոդել, հաշվի առնել և որոշել սեյսմիկ բեռների ազդեցության տակ բետոնային և գրունտային հիդրոտեխնիկական կառուցվածքների դինամիկ վարքագծի առանձնահատկությունները, իրականացնել հիդրոտեխնիկական կառուցվածքների ամրության գնահատում:
Դասընթացի վերջնարդյունքները	<b>Ակնկալվում է, որ դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը կկարողանա.</b> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնել հիդրոտեխնիկական կառուցվածքների ժամանակակից նախագծման ծրագրերը (PLAXIS 2D, Civil 3D, Redit և այլն),</li> <li>• տարբերակել հիդրոտեխնիկական կառուցվածքների համակարգչային նախագծման հիմնական փուլերը,</li> <li>• առաջարկել ժամանակակից մոդելավորման մեթոդները ֆիլտրացիայի, ամրության, կայունության և այլ հաշվարկների</li> </ul>

	<p>իրականացման համար:</p> <ul style="list-style-type: none"> <li>• գնահատել բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների ամրությունը,</li> <li>• ստանալ բետոնի վարքագծի մոդելներ,</li> <li>• ճշգրիտ կանխատեսել կառուցվածքի վրա ազդեցության հետևանքները:</li> </ul>
Դասավանդման և ուսումնառության մեթոդները	<p>Դասավանդման մեթոդներ, դասախոսություն, գործնական, էլեկտրոնային հարթակ, լաբորատոր փորձեր, համացանց:</p> <p>Ուսումնառության մեթոդներ, Ուսումնամեթոդական գրականություն, համացանց:</p>
Գնահատման մեթոդները	Գրավոր և բանավոր ընթացիկ հարցումներ, լաբորատոր և ինքնուրույն աշխատանքի հանձնում, միջանկյալ և ամփոփիչ քննություն թեստային տարբերակով:
<b>Տեղեկատվություն դասընթացի (առարկայի) վերաբերյալ</b>	
Մասնագիտական կրթական ծրագիրը	071804.02.7 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
Դասընթացի ծածկագիրը	
Դասընթացի անվանումը	<b>Հողային և ջրային ռեսուրսների թվային հետազոտություն և քարտեզագրում</b>
Դասընթացի տեսակը	Պարտադիր
Դասավանդման լեզուն	հայերեն
Կրեդիտները (ECTS)	4
Դասընթացի անցկացման կիսամյակը	2-րդ
Մուտքային պահանջներ	“Բարձրագույն մաթեմատիկա”, “Ճարտարագիտական գեոդեզիա”, “Հողային և ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարում”, “Տեղեկատվական տեխնոլոգիաներ”: MS Office, AutoCad, ArcGis, Internet Explorer, Power point ծրագրային փաթեթներ:
